

## Մասնագիտության նկարագիրը

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0811.09.5 «ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0811.08.01.5 «ՄԵՂՎԱԲՈՒՅԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
I. Դերը	Մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում (ֆերմաներում) մեղուների (մեղվաընտանիքների) խնամքի, մեղրամթերքների արտադրության, նախնական վերամշակման և պահպանման աշխատանքների կազմակերպում ու պլանավորում:
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	
<b>Խնդիրների բնագավառ 1. Մեղուների խնամքի կազմակերպում</b>	
Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> <li>1) մեղվաընտանիքների բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովում տարվա բոլոր եղանակներին,</li> <li>2) մեղուների կերակրում</li> <li>3) մեղուների (մեղվաընտանիքների) պաշտպանությունը վնասատուներից</li> <li>4) մեղուների (մեղվաընտանիքների) պաշտպանությունը տարբեր հիվանդություններից և այդ հիվանդությունների կանխարգելումը:</li> </ol>
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> <li>• մեղվաընտանիքների համար ապահովված են բնականոն կենսագործունեության պայմաններ</li> <li>• մեղուները ապահովված են անհրաժեշտ կերով,</li> <li>• մեղուները (մեղվաընտանիքները) պաշտպանված են վնասատուներից</li> <li>• մեղուները (մեղվաընտանիքները) ստացել են անհրաժեշտ բուժում:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 2. Մեղուների բուծում և բազմացում</b>	
Աշխատանքային գործընթացները	<ol style="list-style-type: none"> <li>1) մեղուների բուծում և բազմացում,</li> <li>2) մայր մեղուների բուծում,</li> <li>3) մեղուների արհեստական սերմնավորում,</li> <li>4) մեղվաընտանիքների ձևավորում բազմացում:</li> </ol>
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> <li>• մեղուների բուծումը կատարվել է արդյունավետ և գործող ընթացակարգերին համապատասխան,</li> <li>• մայր մեղուների բուծումը կատարվել է արդյունավետ և գործող ընթացակարգերին համապատասխան,</li> <li>• մեղուների արհեստական սերմնավորումը կատարվել է արդյունավետ և գործող ընթացակարգերին համապատասխան,</li> <li>• ձևավորվել են ուժեղ մեղվաընտանիքներ:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 3. Մեղվամթերքների արտադրություն և նախնական վերամշակում</b>	

<b>Աշխատանքային գործընթացները</b>	<p>1) մեղվամթերքների արտադրություն,</p> <p>2) մեղվամթերքների նախնական վերամշակում,</p> <p>3) մեղվամթերքի պահեստավորում և պահպանում:</p>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• արտադրվել է ստանդարտներին համապատասխան որակյալ մեղվամթերքներ</li> <li>• մեղվամթերքների նախնական մշակումը կատարվել է գործող ստանդարտներին համապատասխան,</li> <li>• մեղվամթերքների պահեստավորումը և պահպանումը կատարվել է գործող ստանդարտներին համապատասխան:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 4. Գյուղատնտեսական մշակաբույսերի խաչաձև փոշոտման կազմակերպում</b>	
<b>Աշխատանքային գործընթացները</b>	<p>1) տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերի խաչաձև փոշոտման համար պահանջվող մեղվաընտանիքների քանակի որոշում,</p> <p>2) տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերի խաչաձև փոշոտման համար մեղուների օգտագործում:</p>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• ընտրված տարածքի գյուղատնտեսական մշակաբույսերը խաչաձև փոշոտվել են մեղուների կողմից:</li> </ul>
<b>Խնդիրների Բնագավառ 5. Մեղվաբուծության բնագավառում մեղվամթերքների արտադրության և ծառայությունների մատուցման գործընթացների կառավարում և կազմակերպումը</b>	
<b>Աշխատանքային գործընթացները</b>	<p>1) մեղվաբուծության բնագավառում մեղվամթերքների արտադրության և ծառայությունների մատուցման հիմնական ցուցանիշների պլանավորում,</p> <p>2) կատարողների կողմից աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման կազմակերպում,</p> <p>3) կատարողների կողմից աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման ընթացքի և արդյունքների հսկում ու գնահատում,</p> <p>4) սահմանված կարգով հաշվապահական-հաշվետվական փաստաթղթերի վարում:</p>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• մեղվաբուծության բնագավառում մեղվամթերքների</li> <li>• արտադրության և ծառայությունների մատուցման</li> <li>• հիմնական ցուցանիշների պլանավորվել են ճիշտ, աշխատանքները համապատասխան հսկողության պայմաններում իրականացվել են գործող ստանդարտներին համապատասխան,</li> <li>• աշխատանքների կազմակերպման և պլանավորման վերաբերյալ</li> </ul>

	փաստաթղթերը կազմվել են համապատասխան գործող նորմերի:
<b>III. Պատասխանատվությունը (անմիջական պատասխանատվության շրջանակը)</b>	Պատասխանատու է՝ կատարած աշխատանքի արդյունքի, իր և իր ենթակայությամբ աշխատողների աշխատանքային պարտականությունների պատշաճ իրականացման, իրեն վստահված արտադրական միջոցների պահպանման ու արդյունավետ շահագործման, արտադրական սանիտարիայի, աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման և անվտանգ միջավայրի ստեղծման, աշխատանքային անվտանգության տեխնիկայի կանոնների և հակահրդեհային անվտանգության կանոններից բխող պահանջների պահպանման ու ապահովման համար:
<b>IV. Լեզուները</b>	հայերեն- գերազանց ռուսաց լեզու- բավարար այլ օտար լեզու- բավարար
<b>V. Համակարգիչը</b>	ա. MS Word բավարար բ. MS Excel բավարար գ. Internet Explorer բավարար
<b>VI. Գիտելիքներ</b>	<b>Պետք է տիրապետի հետևյալ գիտելիքներին.</b> 1) ոլորտի զարգացման հեռանկարները և խնդիրները, 2) մեղվաընտանիքի կենսաբանական հիմունքները, մեղուների հիմնական ցեղերը և տեսակները, անատոմիան ու ֆիզիոլոգիան, մոմ արտադրող գեղձերի աշխատանքը, խայթոցը և մեղվի թույնի ազդեցությունը մարդկանց ու կենդանիների վրա, 3) մեղվաընտանիքի կազմը, մեղվաընտանիքի առանձնյակների՝ մայր մեղվի, աշխատավոր մեղվի և բոռերի մորֆոլոգիական ու ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, նրանց գործառույթները, 4) աշխատավոր մեղուների գործառույթների բաժանումը կախված նրանց տարիքից, 5) մեղվաընտանիքի կենսագործունեությունը տարվա ընթացքում և ըստ տարվա եղանակների, 6) մեղուների հաղորդակցման ազդանշանները, 7) մեղուների սնունդը, 8) մեղուների աճի, զարգացման և բազմացման առանձնահատկությունները բնական ու արհեստական եղանակներով, 9) պարսատվությունը, դրա պատճառները և կանխարգելումը, 10) փեթակների հիմնական տիպերը և կառուցվածքը, 11) փեթակների պատրաստման և ջերմամեկուսացման համար օգտագործվող նյութերը,

	<p>12)մեղվաբուժական մեղքերը զննելու և խնամելու համար մեղվաբուժական գույքն ու սարքավորումները, մեղվանոցային մեխանիզմները և կառույցները,</p> <p>13)մեղվամթերքների արտադրության, նախնական վերամշակման և պահպանման տեխնոլոգիաները,</p> <p>14)մեղվամթերքների հատկությունները և դրանց օգտագործումն ու կիրառումը,</p> <p>15)մեղուների խնամքի և բուժման տեխնոլոգիաները,</p> <p>16)անասնաբուժասանիտարական կանխարգելիչ կանոնները,</p> <p>17)մեղվաբուժական գույքի և մեղվանոցային սարքավորումների ախտահանման կանոնները,</p> <p>18)մեղուների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները, դրանց ախտորոշման մեթոդներն ու կանխարգելիչ միջոցառումները,</p> <p>19)մեղուների վնասատուները և դրանց դեմ պայքարի միջոցները,</p> <p>20)մասնագիտական գործունեության բնագավառում աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման վերաբերյալ օրենսդրական ակտերի և նորմատիվ այլ փաստաթղթերի դրույթները,</p> <p>21)արտադրանքի (ծառայությունների) գնագոյացման մեխանիզմները, աշխատանքի վարձատրության ժամանակակից ձևերը,</p> <p>22)կազմակերպության տեխնիկատնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը,</p> <p>23)աշխատանքի կազմակերպման և կառավարման հիմունքները,</p> <p>24)տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդները,</p> <p>25)տուժածներին առաջին օգնություն ցուցաբերելու կարգն ու կանոնները,</p> <p>26)շրջակա միջավայրի բնօգտագործման և բնապահպանական անվտանգության իրավական ու սոցիալական հիմնախնդիրները:</p>
<p><b>VII.Կարողությունները և հմտությունները</b></p>	<p><b>Պետք է տիրապետի հետևյալ կարողություններին և հմտություններին.</b></p> <p>1)օգտագործել մեղվաբուժական գույքը և մեղվանոցային սարքավորումներն ըստ նշանակության,</p> <p>2)իրականացնել մեղվաբուժական գույքի և մեղվանոցային սարքավորումների փոքրածավալ վերանորոգում,</p> <p>3)ախտահանել մեղվաբուժական գույքը, մեղվանոցային սարքավորումները, շինությունը, փոխադրամիջոցները,</p>

- 4)իրականացնել մեղվաբուժական տնտեսությունում առկա կրծողների ոչնչացման միջոցառումներ՝ անասնաբույժի կամ սանիտարահամաճարակային կենտրոնի մասնագետի ղեկավարությամբ,
- 5)ապահովել կենսանյութերի հետ աշխատանքի հականեխման պայմաններ,
- 6)օգտագործել մանրադիտակային օպտիկական տեխնիկա,
- 7)պահպանել անձնական հիգիենայի և անասնաբուժասանիտարական կանոնները, կիրառել պաշտպանության անհրաժեշտ մեթոդներ ու միջոցներ,
- 8)պատրաստել ախտահանման և լվացման միջոցների լուծույթներ,
- 9)հայտնաբերել հիվանդ մեղուներին,
- 10)կատարել ոչ բարդ անասնաբուժական գործողություններ,
- 11)իրականացնել մեղվաընտանիքների խնամքի աշխատանքներ՝ տարվա եղանակին համապատասխան,
- 12)կազմակերպել նոր մեղվաընտանիքների բուծումը, մայր մեղուների և բոռերի աճեցումը, ապահովել դրանց անվնաս պահպանումը,
- 13)կիրառել մեղվաընտանիքների արագացված վերարտադրության միջոցառումներ,
- 14)ապահովել մեղուների բազմացման, կերակրման, խնամքի և մեղվաբուծության արտադրանքի ստացման մեթոդների կիրառումն՝ըստ գործող ստանդարտների,
- 15)կատարել նմուշառում մեղվանոցի և մեղվաբուժական տնտեսության անասնաբուժասանիտարական վիճակի վերաբերյալ, հարկ եղած դեպքում այդ նմուշները ուղարկել հետազոտության,
- 16)մեղվանոցում և մեղվաբուժական տնտեսությունում ինքնուրույն իրականացնել պարզագույն բուժական-առողջարարական միջոցառումներ,
- 17)արտադրել մեղվաբուծության հիմնական և լրացուցիչ մթերքներ, գնահատել դրանց որակը,
- 18)վարել մեղվաընտանիքների տոհմային հաշվառում,
- 19)որոշել մեղվաընտանիքների բնութագրերը՝ արդյունավետությունը, ցրտադիմացկունությունը, հիվանդություններին դիմակայելու կարողությունը,
- 20) բուծել մայր մեղուներ՝ արհեստական եղանակով,
- 21)վերահսկել մայր մեղուների և բոռերի զուգավորումը,
- 22)որոշել գյուղատնտեսական մշակաբույսերի փոշոտման համար

	<p>պահանջվող մեղվաընտանիքների քանակը (մեղվանոցների չափը),</p> <p>23) հաստատված ձևաչափով վարել փաստաթղթաշրջանառություն,</p> <p>24) պաշտպանել իր իրավունքներն աշխատանքային հարաբերությունների կարգավորման ընթացքում,</p> <p>25) կատարել մեղվաբուժական տնտեսության տեխնիկատնտեսական ցուցանիշների հաշվարկման և բիզնես պլանի կազմման աշխատանքներ,</p> <p>26) ապահովել մասնագիտական գործունեությունում աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի, հիգիենայի և հրդեհային պաշտպանության կանոններից ու նորմերից բխող պահանջները,</p> <p>27) տուժածներին ցուցաբերել առաջին օգնություն.</p> <p>28) կիրառել բնապահպանական և կենսաանվտանգ տեխնիկա:</p>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշները</b></p>	<p>1) պահպանել էթիկայի նորմերը միջանձնային հարաբերությունների կառուցման ժամանակ և օգտվել վարքագծի ինքնակառավարման մեթոդներից,</p> <p>2) լինել կարգապահ և ճշտապահ աշխատանքային պրոցեսների կազմակերպման և իրականացման ժամանակ,</p> <p>3) լինել բարեհամբյուր աշխատանքային ընկերների և կլիենտների հետ շփումներում,</p> <p>4) դրսևորել ինքնուրույն վերլուծական կարողություններ և աշխատանքային նախաձեռնություններ,</p> <p>5) կարողանալ վարել աշխատանքային կոլեկտիվի անդամների, ղեկավարների և պատվիրատուների հետ զրույցներ, բանակցություններ կապված մասնագիտական խնդիրների հետ:</p>